Cashback-ի տրամադրման պայմաններ և դրույթներ

1. Հիմնական հասկացություններ

Ակցիա – «Էվոկաբանկ» ԲԲԸ- ի կողմից իրականացվող միջոցառում,

Բանկ – «Էվոկաբանկ» ԲԲԸ,

Քարտապան – «Էվոկաբանկ» ԲԲԸ-ում «Mastercard» վճարային քարտի թողարկման և սպասարկման համար պայմանագիր կնքած ֆիզիկական անձ,

Վճարային համակարգ – Mastercard Inc,

Քարտ – Բանկի կողմից թողարկված «Mastercard» վճարային համակարգի քարտ, որը տրամադրվում է Քարտապանին,

Cashback կամ Քեշբեք – Գումարի որոշակի տոկոսի վերադարձ գնում կատարելուց հետո,

Չեղյ – Քարտի սպասարկման վճարի նվազեցում՝ համեմատած սկզբնական սպասարկման վճարի հետ,

Վաճառքի կետ – Արտասահմանյան վաճառքի սպասարկման կետեր, որտեղ գործարք կատարելիս ձևավորվելու է **Cashback,**

Կանոններ – Ակցիային մասնակցելու պայմաններն ու դրույթները,

Chargeback – Վճարման վերադարձ, երբ Քարտապանը վիճարկում է գործարքը և Բանկը հետ է վերադարձնում գումարը.

Refund, reversal – Գումարի վերադարձ Քարտապանին՝ անավարտ կամ չեղարկված գործարքի դեպքում: Refund-ը իրականացվում է վաճառողի կողմից ապրանքը վերադարձնելուց հետո: Reversal-ի դեպքում գործարքը անմիջապես չեղարկվում է և գումար չի գանձվում,

Հաշվանցված գործարք – հաստատված գործարք, որն արդեն հաշվառված է բանկային կամ վճարային համակարգում:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Ակցիան իրականացվում է Բանկի բոլոր «Mastercard» վճարային քարտերով:

2.2. Ակցիայի շրջանակում Քարտապանները, կատարելով վճարումներ նշված առևտրային կետերում, ստանալու են քեշբեք 20 տոկոս, ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը հանելուց հետո:
2.3. Յուրաքանչյուր Քարտապանին Քեշբեք տրամադրվում է առավելագույնը 30,000 ՀՀ դրամ գումարի չափով:

2.4. Ակցիան գործում է 20.11.2026 թվականից մինչև 30.11.2026 թվականը:

3. Ակցիայի պայմաններ

3.1. Ակցիայի շրջանակում Քարտապանները Քեշբեք ստանալու համար պետք է վճարումներ կատարեն ՀՀ տարածքից դուրս սպասարկվող օնլայն և օֆֆլայն Վաճառքի կետերում:

3.2. Վճարումը պետք է կատարվի Քարտով:

3.3. Ակցիային մասնակցում են ինչպես գործող, այնպես էլ նոր թողարկված Քարտերի Քարտապանները:
3.4. Քարտապանների կողմից Ակցիային մասնակցութունը կատարվում է ավտոմատ՝ առանց լրացուցիչ համաձայնության:
3.5. Փաստացի հաշվարկված Cashback-ը Քարտապանին փոխանցվում է Ակցիայի ավարտից հետո հաջորդող 15 (տասնհինգ) աշխատանքային օրերի ընթացքում: Քարտապանին փոխանցվող Քեշբեքի գումարը հարկման ենթակա չէ, և Քարտապանը ստանում է Քեշբեքի ամբողջ գումարը՝ առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված 20% եկամտային հարկի պահման:
3.6. Քեշբեքը հաշվարկվում է Քարտապանի կողմից Ակցիայի ընթացքում նշված Վաճառքի կետերում կատարված և հաշվանցված բոլոր գործարքների հանրագումարից:
3.7. Cashback տրամադրվելու է այն Քարտերով կատարված գործարքների մասով, որոնք Cashback տրամադրելու պահին փակված չեն և ունեն գործող կարգավիճակ:
3.8. Քարտի գործողության ավարտի դեպքում, եթե Քարտը չի վերաթողարկվում, ապա Cashback չի տրամադրվում:
3.9. Cashback տրամադրվում է հաշվանցված գործարքների դեպքում:
3.10. **Refund, reversal, Chargeback** կատարված գործարքների դեպքում Cashback չի տրամադրվում:

3.12. Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: